ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը	Սամվել Հարությունյան
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ
Գործուղման վայրը և ժամկետները	Մոսկվա՝ 2017թ. հունիսի 26- 28-ը
Հրավիրող կողմը	Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ
Գործուղման նպատակը	Մասնակցություն Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 20-րդ նիստին
Քննարկված թեմաները	Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի աշխատանքների, իրականացվող ծրագրերի և գործունեությանն հետ կապված խնդիրներ, «Գիտատեխնիկական ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացման աջակցություն» հիմնադրամի (Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի հետ իրականացվող և ապագա համագործակցությանն առնչվող հարցեր և այլն:
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 20-րդ նիստին ընթացքում ներկայացվել են ԱՊՀ անդամ-պետությունների ինովացիոն համագործակցության միջպետական ծրագրի (2020թ.-ից հետո) նախագիծը, ինովացիոն ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության միջպետական ծրագրի (մինչև 2020թ.) իրականացումը և միջոցառումների 2017-2020թթ. ժամանակացույցը, գիտատեխնիկական ինովացիոն պիլոտային նախագծերի կատարման աշխատանքները, ինչպես նաև միջպետական պիլոտային նախագծերի նոր ցանկը, հստակեցվել են ԱՊՀ անդամ-

	պետությունների ինովացիոն համագործակցության միջպետական ծրագրի (մինչև 2020թ.) շրջանակներում 2017-2020 թվականների համար իրականացվելիք միջոցառումների ու նախագծերի ցանկը, ինչպես նաև «Ինովացիոն ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության միջպետական ծրագրի (մինչև 2020թ.) շրջանակներում իրականացված նախագծերի կատարման մասին հաշվետվությունները: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 20-րդ նիստին հանդես է եկել զեկույցով՝ «ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության շրջանակներում ունեցած հաջողությունների և անհաջողությունների հիմքերն ու պատճառները» թեմայով: Զեկույցի ընթացքում Ս. Հարությունյանն առաջարկություններ է ներկայացրել նաև ԱՊՀ անդամ-պետությունների շրջանակներում համատեղ գիտատեխնիկական փորձագիտական համակարգի, համատեղ էլեկտրոնային գրադարանային ցանցի, ինչպես նաև միացյալ գիտատեխնիկական հարթակի ստեղծման վերաբերյալ, նշելով՝ ԱՊՀ անդամ-պետությունների գիտատեխնիկական ոլորտում համագործակցության գերակա ուղղությունների հստակեցման անհրաժեշտությունը: Մոսկվա այցի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ունեցել է մի շարք հանդիպումներ: Մասնավորապես, ս.թ. հունիսի 26-ին Սամվել Հարությունյանը հանդիպել է «Գիտատեխնիկական ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացման աջակցություն» հիմնադրամի (Ռուսաստանի Դաշնություն) տնօրենի խորհրդական Ի. Բորտնիկի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում գործող ծրագրերի

	կատարման ընթացքը և համագործակցության ընդլայնման ուղիները: Ս.թ. հունիսի 26-ին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը հանդիպել է նաև Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ: Զրույցի ընթացքում շոշափվել են համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում նաև «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀԱՍԵ ՌՆՆԹ 2016» մրցույթի շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի կատարման ընթացքը և «Դոնի հայերի պատմական անցյալն ու ներկա իրավիճակը» փաստավավերագրական գիտահանրամատչելի ֆիլմի ստեղծման համար ֆինանսավորման ապահովման եղանակները: 2017թ. հունիսի 28-ին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը հանդիպել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Վ. Տողանյանին, որի հետ զրուցել է գիտության ոլորտում համագործակցության շրջանակների ընդլայնման գործընթացին դեսպանության մասնակցության մասին:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:	«Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացման աջակցություն» հիմնադրամի տնօրենի խորհրդական Ի. Բորտնիկի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել այս տարի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ» համատեղ մրցույթ հայտարարելու մասին, որի արդյունքում, նախնական պայմանավորվածության համաձայն, կֆինանսավորվի ևս 3 գիտական ծրագիր (նախորդ մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 6 գիտական ծրագիր): Ս.թ. հունիսի 26-ին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ հանդիպման

	ընթացքում հստակեցրել է «Դոնի հայերի պատմական անցյալն ու ներկա իրավիճակը» փաստավավերագրական գիտահանրամատչելի ֆիլմի ստեղծման համար ֆինանսավորման հատկացման պայմաններն ու ժամկետները, պայմանավորվածություն է ձեռք բերվել 2017թ. աշնանը Մոսկվայում կայանալիք Թեմի ձևավորման 300 ամյակին նվիրված արարողություններին ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցության վերաբերյալ:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի նիստին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Ս. Հարությունյանն առաջարկել է ԱՊՀ անդամ-պետությունների համար ստեղծել համատեղ գիտատեխնիկական փորձագիտական համակարգ, համատեղ էլեկտրոնային գրադարանային ցանցի, ինչպես նաև միացյալ գիտատեխնիկական հարթակ, հստակեցնել գիտական գերակա ուղղությունները: Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի հաջորդ նիստն անցկացնել ս.թ. աշնանը Բիշքեկում (Ղրղզական Հանրապետություն): Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ հանդիպման ընթացքում առաջարկվել է «Դոնի հայերի պատմական անցյալն ու ներկա իրավիճակը» փաստավավերագրական գիտահանրամատչելի ֆիլմի ֆինանսավորումը սկսել ս.թ. սեպտեմբերից:
Գործուղվող՝	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	03.07.17թ.